

ՆԵՄԵՍԻՈՍԻ

ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԵՄԵՍԱՅԻՈՅ

ՅԱՂԱԳՍ ԲԵՈՒԹԵԱՆ ՄԱՐԳՈՅ *

Չմարդն 'ի հոգւոյ իմանալոյ և 'ի մարմնոյ՝ գեղեցիկ կազմեալ, և այնպէս բարւոք՝ որպէս ոչ հնար գոլ այլազգ լինել կամ հաստիլ՝ թուեցաւ բազմաց և արանց բարեաց: Իսկ իմանալի ասել զհոգին՝ երկբայութիւն ունեւով ¹, լծեալ աս արդեօք հպեալ միտք 'ի հոգի, որպէս այլ որ յայլ ², իմանալի արար զնա. և կամ լծէ զիմանալին գոլ յինքնէն և բնութեամբ ունիցի հոգի ստացեալ. և այս է գեղեցիկ նորա մասն, որպէս ակն 'ի մարմնի: Ոմանք՝ յորոց և Պլոտոնիոս ³, այլ գոլ ասացին զհոգին և այլ զմիտս. յերից հաստիլ զմարդն, 'ի մարմնոյ և 'ի հոգւոյ և 'ի մտաց. որոց հետեալ Սպորդինարէս ⁴ Լաւոդիկիցւոցն եղեալ եպիսկոպոս. քանզի զայս կառուցեալ հիմն իւրոց կարծեացն, և շինեալ զայլն 'ի սորին վերայ՝ ըստ իւրոյ աշխդոյն: Բայց ոմանք ոչ որոշեցին 'ի հոգւոյ զմիտս, այլ նորին ինքեան իշխանական գոլ զիմացականն համարին ⁵: Իսկ Արիստոտելէս ⁶ զգորութեամբ միասն՝ ընդ մարդոյն կազմիլ ասէ, բայց զներգործութեամբն 'ի դրուստ մտեալ 'ի մեզ. ոչ զգորութիւն և զէութիւն մարդոյն կատարեալ, այլ յաճումն բնաւորակա՝ նացն զիտութեան և տեսութեան նըպաստ եղեալ. ամենին յոյժ սակաւուց 'ի մարդկանն, և միայն իմաստասիրացն ունեյ զներգործութեամբ միտսն՝ հաստատէ: Իսկ Պլատոնի ոչ թուեցաւ առեւ զերկաքանչիւրսն գոլ զմարդոյն՝ զհոգին և զմարմինն, այլ զհոգին՝ մարմնով, այսպիսեալ վարեալ՝ արժանաւայեցելա՝ զոյն տեսեալ զոր 'ի մարդումն ⁷. և յայս մանէ դարձուցանելով զմեզ 'ի միայն 'ի հոգւոյն աստուածայնութիւնն և հպատականս, զի հոգին զմեզ ինքեանս գոլ հաւատացեալ ⁸, զհետ հոգւոյն բարու լծեանց ընթացողք միայն՝ առաքինութեամբ և բարեպաշտութեամբ, և մի զմարմնոյ ցանկութիւնս սիրեացողք, որպէս ոչ մարդոյ կամ մարդ ⁹, այլ կենդան

տոտելէս ⁶ զգորութեամբ միասն՝ ընդ մարդոյն կազմիլ ասէ, բայց զներգործութեամբն 'ի դրուստ մտեալ 'ի մեզ. ոչ զգորութիւն և զէութիւն մարդոյն կատարեալ, այլ յաճումն բնաւորակա՝ նացն զիտութեան և տեսութեան նըպաստ եղեալ. ամենին յոյժ սակաւուց 'ի մարդկանն, և միայն իմաստասիրացն ունեյ զներգործութեամբ միտսն՝ հաստատէ: Իսկ Պլատոնի ոչ թուեցաւ առեւ զերկաքանչիւրսն գոլ զմարդոյն՝ զհոգին և զմարմինն, այլ զհոգին՝ մարմնով, այսպիսեալ վարեալ՝ արժանաւայեցելա՝ զոյն տեսեալ զոր 'ի մարդումն ⁷. և յայս մանէ դարձուցանելով զմեզ 'ի միայն 'ի հոգւոյն աստուածայնութիւնն և հպատականս, զի հոգին զմեզ ինքեանս գոլ հաւատացեալ ⁸, զհետ հոգւոյն բարու լծեանց ընթացողք միայն՝ առաքինութեամբ և բարեպաշտութեամբ, և մի զմարմնոյ ցանկութիւնս սիրեացողք, որպէս ոչ մարդոյ կամ մարդ ⁹, այլ կենդան

* Յամենայն օրինակս մեր ձեռագիրս (թուով վեց) զնի 'ի խորագրին Գրիգորի Եպիսկոպոսի Նիսացոյ. գրութ 'ի վերոյ:

¹) Աստիքն՝ կրկին եղանակաւ մարթի իմասնայի ասել զհոգին:

²) Աստիքն՝ որպէս իր ինչ կցեալ առ այլ իր:

³) Յօրինակս ինչ Պլատոնիոս Պլոտինոս ոչ միայն որիչ զհոգին 'ի մտաց վարդապետէր, այլ ասէր զառաջինն՝ որպէս յառաջնադասումն ինչ և կամ արդիւնս մտաց: Աստիքն և Ս. Սէրգիստինոս 'ի ճառս Հանգամային աւանդէ զմարդն յերից կազմեալ մասանց, 'ի մտաց, 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ, գրով այսու՝ ի պատկեր Սրբոյ Արքայութեան:

⁴) Ի չորրորդում դարու երկուք այսու առաւմար կապին իմաստասէրք, որք և գլոխ կապին առանձին դպրոցաց կրսերն (հերետիկոսն)

զորմէ բանք են աստուծո՝ մեռալ յամեն 381:

⁵) Աստիքն, համարին զմիտս՝ առաջին կամ սկիզբն լինել կարողութեանց հոգւոյն:

⁶) Գլխք Յ. Յարապա հոգւոյ. Վ. Ս.

⁷) Աստիքն, Պլատոն ոչ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ կազմիլ զմարդն ասաց, այլ 'ի հոգւոյ՝ ապա, ուստի եղեալ 'ի մարմնոյ, ոչ ոչ եղեալ այսու՝ բայց եթէ արժանաւորագունի (հոգւոյն) 'ի մարդոյն:

⁸) Այս է, զի հաւատալով հոգիս զմեզ գոլ:

⁹) Աստիքն յօրինակսն. յոյն որպէս ոչ մարդոյ՝ որովք մարդն: Ի ժմն. Ձեռն ցանկութեան գեալ և զմարմին սիրել՝ այս չիւցելէ մարդոյ, և կամ լծէ 'ի մարդն էր 'ի սկզբանս, այլ յառաջ 'ի յանասունն եղև, և ապա յետոյ 'ի մարդն յարեցաւ:

նւղնախկնարար, բայց մարդոյ հետեալ բար, վասն զի և կենդանի է մարդն : իսկ և այլազգ՝ տիրազոյն քան զմարմին՝ խոստովանի գոլ յամենայն մարդկանէ՝ հոգի . քանզի ՚ի սմանէ որպէս զործարան շարժի մարմինն . և յայտնէ զայս մահ . քանզի ՚ի բաց զատուցելոյ հոգւոյն՝ անշարժ մնայ մարմինն ամենեկն և առանց ներդործութեան . որպէս տրուեստաւորի ՚ի բաց զատուցելոյ՝ անշարժ մնան գործիքն, թայց ծանօթ է¹ զի և անշնչիցն հասարակորդ է . և անբանիցն կենդանացն հաղորդ եղև իմանալովն . քանզի հաղորդի անշնչիցն ըստ մարմնոյ, և ըստ չորից տարերայն խառնուածի . իսկ տրեկոցն՝ և ըստ այսոցիկ և ըստ անդականին և ըստ սերմնականին զօրութեան . իսկ անբանիցն թէ և ըստ այսոցիկ՝ սակայն չափաւորապէս, ըստարձակօղ չարժութեան² և ըստ բնաւորականի ցանկութեան և սրտմտութեան, և զգայականին և տուրարեաւ շնչոյն զօրութեան . քանզի այս ամենայն հասարակաց է մարդկան և անասնոց, թէ և ոչ ամենեցուն ամենայն³ : իսկ հպի բնաւորութեամբ և յանմ՝ արմինս և իմանալիս բնութիւնս՝ խորհելովն և իմանալովն և դատելովն զիւրաքանչիւրն⁴, և զառաքնութեանց զհետ ընթանալով և զդագաթն առաքնութեանց՝ զբարեպաշտութիւն ՚ի գիրկս ամբողջելով՝ վասն որոյ և որպէս ՚ի միջասահման է իմացականին և զգալոյ էութեանս . հպելով ըստ մարմնոյն և մարմնականացն զօրութեանց՝ յայլան կենդանիս և յանշունչսն, իսկ ըստ բանականին՝ յանմարմին էութիւնս, որպէս ասացաւ յա-

ւա՛լադոյն : Քանզի արարչագործն ըստ փորձուն⁵ նմանեցոյց մերձիլ առ միմեանրս զգանազանսն բնութիւնս՝ որպէս մի գոլ և ազգակիցս զամենայն զստացուածս . յորմէ մանաւանդ ցուցանի՝ մի գոլ զամենայն էիցս արարչագործ⁶ : Քանզի ոչ միայն միաւորեաց զէութիւնս ըստ մասին անհատիցն⁷, այլ և զիւրաքանչիւրսն տա միմեանս պատկանեաց ընդաներար :

Քանզի որպէս յիւրաքանչիւրսն կենդանիս միաւորեաց զանդգայան ընդ զգալականացն, զտան և զմադ և զերենդունան, զճարպ քաղորթին և զայլն զանդգայան՝ ընդ զգայնոցք ջլք . և արարչանդգայից և ՚ի զգայնոց չարակացեալ զկենդանին, և ոչ միայն չարակացեալ՝ այլ և մի գոլ եցոյց : Այլպէս և ՚ի վերայ այլոցս ըստ տեսակի ստացուածոցս⁸ աւար չարամօտիլ առ միմեանս, ըստ փութութեան, անմանութեամբ բնութեանցն . որպէս զի ոչ բազում ինչ մեկուսիլ ամենեկն անշնչիցն՝ յունդացն զանդակսն զօրութիւն անկոցն, և ոչ դարձեալ այսոցիկ՝ անբանիցն և ՚ի զգայականացն կենդանեաց, այլ և ոչ անբանիցն ՚ի բնաւորացն ամենեկն օտար և անհալորդ և առանց չաղկապի լինել բնակցի և բնաւորի⁹ : Քանզի տարբերի և քար ՚ի քարէ զօրութեամբ իւրիք . այլուր մանգնիտն քար տրտաքս ելեալ թուի յայլոց քարանց բնութենէ և զօրութենէ, յայտերեակ քարշիւղ յինքն և ըմբռնելով զերկաթ, որպէս կերակուր իմն իւր առնել կամեցեալ . և ոչ միայն ՚ի մինն երկաթ առնէ զայս, այլ և զայլս այլով ըմբռնել հաղորդեցուցանելով զըմբռնեալսն զամենեսեսն իւրոյ

¹) Այս է՝ ճանաչելի է :

²) Յայնն Τοις δὲ ἀλόγοις καὶ ἐν τοῦτοις μέν, և այլն . այսինքն . իսկ անբանիցս՝ բաց յայացանէ, նաև ըստ կամաւոր չարժմանն, և այլն :

³) Իժմն . Մարդս միայն զամենն ունի, այլքն մի քան զմի պակաս :

⁴) Զառադ խորաքանիւր յոյով ուրեք չէ զգաւար առնու ՚ի կիր թարգմանիլս, ըստ յունական ոճոյ (ἐκαστα), իմաստիւք ամենայնի կամ մէկ միոյ :

⁵) Այս է՝ անզգալի խորոցաւ մերձեցոյց առ միմեանս, և այլն :

Պրոֆ Գ .

⁶) Ըստ յունին՝ զարարչագործ առեալ ՚ի ներգործական միտս, իբր արարչագործոյ . ὥστε μία εἶναι καὶ συγγενή τῇν πάσαν κτίσιν .

⁷) Իժմն . Այլ միայն զանհատ մարդն և զէութիւն և զտեսակ միաւորեաց, այլ և զմէկ մէկ մարդ, յի զամենայն կենդանոյ զանդգայան ընդ զգայականին խառնեաց, այս է զսակն ընդ ինն :

⁸) Իժմն . Այլ մարդ և այլ մարդ, և այլ անասունք և առնեք . բայց ըստ մասին խառնեաց զնստաւ ընդ իրեարս :

⁹) Այսինքն, ոչ է առանց բնակից և բնաւոր չաղկապի :

զօրութեան. քանզի ըմբռնէ և երկաթ զերկաթ՝ յորժամ՝ ի մագնիտն քարէ ըմբռնիցի: Իւ ապա դարձեալ զնոյնհետայն ի տնկոցն ի կենդանիսն փոխանցելով, ոչ անդէն ի գգայուն և ի դնալուն դիմէ բնութիւնս, այլ ըստ փոքունիչ հպատակաբար՝ յայս եկն յառաջ: Քանզի զխեցէմորթն զեռունս³, որպէս գգայունս ծառս կազմեաց, և արմատացոյց զնոսա ի ծովու զօրէն տնկոց, և ի բրնձի զիպայտ եղ զխեցիկն շուրջ զնոքոք, և կանգնեաց զնոսա որպէս տունկս: Իւ ետ նոյնի զգայութիւնս զշօշափականն, զհասարակացն ամենայն կենդանեացն՝ զգայութիւնն, որպէս զի կցորդ լինել տնկոցն՝ արմատանալովն և կանգուն կալով, իսկ կենդանեացն՝ ըստ շօշափման. քանզի և սպունգն՝ որ արմատացեալ է ի վէմն, և ամիոփիլ և քինալնդիր լինել³ յորժամ ոք մատուցեալ շօշափիցէ, որպէս գրէ Արիստոտելս⁴, վասն որոյ և զայսպիսիս՝ կենդանատունկս⁵ սովորեցան կոչել հինքն իմաստասէրքն:

Իսկ դարձեալ ի պինսն և յայլսն խեցէմորթն՝ հպեցոյց զգնայուն⁶ կենդանեացն ինեութիւնն, զոչ կարողացն երթալ հեռաւոր, այլ անդէն անդ շարժեցելոց. քանզի են և այսպիսիք ինչ բազումք ի խեցէմորթիցն, որք կոչին փորոտիք երկրի⁷: Եւ այսպէս ըստ մասին յաւելեալ ոմանց զգայութիւնս առաւելագոյնըս, իսկ ոմանց՝ զգնայն առաւելագոյն, ի կատարելագոյնն անբանից կենդանեացն հասանէ. և ասեմ կատարելագոյնս՝ զունօղն զամենայն զգայութիւնսն և զկարողն գնալ հեռաւորս: Իսկ դարձեալ փոխանցելով յանբանիցն կենդանեացն ի բանական կենդանի՝ մարդն, և

ոչ զնա անդէն վաղվադակի կազմեաց, այլ նախկին և յայլսն կենդանիսն եղբնաւորականս իմն հանճարս, հնարախորամանկութիւնս առ ի փրկկութիւն որպէս զի մերձ ի բանաւորսն երևել նոցա. և այսպէս զճմարտապէս բանաւ, կան կենդանի՝ զմարդն՝ ած յառաջ:

Ըստ նմին օրինակի և զձայնն խընդրեալ գտցես. ի պարզ և ի միատեսակ ձայնէ ձիոյ և արժառոյ ըստ մասին⁸ ի պէսպէս և ի զանազան եկեալ յառաջ՝ յազաւուց և յայլոց նմանախօսիցն հաւուց ձայն, մինչև ցյօղաւորն և կատարեալ ձայն մարդոյն վախճանեաց: Իսկ դարձեալ զպատկանաւորն բարբառչարամանեալ ընդ մտածութեանցն և խորհրդոյ, զեկուցիչ եղեալ մաւց շարժութեանց: Այսպէս յամենեցունց զամենայն գեղեցկապէս ի մի ժողովեաց զիմացականն և զերևելիս՝ միջնորդութեամբ մարդոյն լինելութեան: Վասն որոյ և գեղեցկապէս Մովսէս զարարագործութիւնն արտադրեալ, յետոյ ասաց զմարդն լինել, ոչ միայն՝ զի ամենեցունց վասն նորա եղելոյ, պատշաճ էր՝ նախ զառ ի պէտս նորա պատրաստել, և այսպէս զնա՝ որ վարէնն նոքօք՝ ածել յառաջ, այլ զի իմացականն ելոյ էութեան և դարձեալ երևելոյս՝ պարտ էր լինել ումեք շաղկապ երկաքանդիւրիցն, զի մի իցէ ամենայն և կրակից⁹ ինքեան, և մի օտար ինքն ինքեան: Արդ եղև՝ որ շաղկապէն գիրկաքանդիւր բնութիւնս՝ կենդանի մտրդն. զորս իմաստութիւնն արարագործին համառօտորար տսել այսպիսիս¹⁰:

Միջանահման բանին և բանականին բնութեան մարդն կարգեալ, եկէ՛ ի մարմինն կոյս շեղեսցի, և զմարմնոյն

¹⁾ Այս է, ըստ յոյն բնագրին՝ աստիճանարար ի փառէն և ըստ չափու յառաջ խաղաղով:

²⁾ Յոյն ունի τὰς πίννας καὶ τὰς ἀκαλύφας, այս է՝ գպինսն (pinne-marine) և գեղիճսն (ortie de mer):

³⁾ Յոյն σὺστε ἄλλοδαί καὶ ἀνοίγεσθαι ἢ μᾶλλον ἐκτείνεσθαι: այսինքն է. և ամիոփի և բանուց կամ մանաւանդ ծաւալի:

⁴⁾ Յաղագս կենդանեաց. Գիրք Ա. Գլ. 10:

⁵⁾ Ζωόφyta (zoophytes):

⁶⁾ Յօրինակին զգայուն. եղաք ըստ յունիս:

⁷⁾ Τὰ καλούμενα γῆς ἄντερα.

⁸⁾ Այս է՝ առ սակաւ սակաւ կամ մասն առ մասն (κατὰ μέρος):

⁹⁾ Իծմէ. Զի ինքն դիմքն կրէր: Յոյն ἵνα ἐν ἡ το πᾶν καὶ συμπάδες ἑαυτῶ, այս է, զի լիցի միութիւն և յարմարութիւն յարարածս ամենայն:

¹⁰⁾ Յոյն, Τὰ μὲν οὖν τῆς σοφίας τοῦ δημιουργοῦ συντόμως εἰπέν, ταῦτα, այս է, ահաւասիկ հանդէս իմաստութեան Արարչին սղադունիւք յայտնեալ:

առաւելագոյնս սիրէ՝ զանսանոցն առնն, կայցի զվարս յինքն, և ընդ նոսին եղիցի թուակից, և հողեղէն կոչեսցի ըստ Պաւղոսի ձայնին, և լուիցէ՝ թէ Հող էիր և հող դարձցիս, և Հաւասարեաց անասնոց անմոռից և նմանեաց նոցա։ Իսկ եթէ 'ի բանական տարցի՝ արհամարհեալ զմարմնականսն զամենայն հեշտութիւնս, զաստուածայինսն և զսիրելիսն Աստուծոյ ընտրեացէ կեանս, և զնախկինսն՝ մարդոյն, եղիցի որպէս երկնաւորն. ըստ ասացելոյն, թէ Որպէս հողեղէնն, նոյնպէս և հողեղէնքս, և որպէս երկնաւորն՝ նոյնպէս և երկնաւորքն։ Եւ է բանականին բնութեան գլուխ՝ փախել և 'ի բաց դառնալ 'ի չարեաց, և փոխիլ և զհետ երթալ բարեաց։ Իսկ բարեացն է ինչ՝ որ ըստ կցորդութեան հոգւոյն և մարմնոյն, (ո՛նողաց և այստեղիկ 'ի հոգին կոյս զվերաբերութիւնն, իբր զի անձին՝¹ վարեալ մարմնովն), որպիսի ինչ՝² առաքինութիւնք. և է ինչ՝ որ հոգւոյն իւր ըստ ինքեան միայնոյ, ոչ եղելոյ կարօտ մարմնոյն, որպէս բաւեալ պաշտութիւն և կամ էիցս տեսութիւն։ Սրդ որք զմարդոյն զվարսն՝ որպէս զմարդոյն զկեանս յօժարին³, և ոչ որպէս այլ կենդանւոյ միայն, առաքինութեամբք զնան և բարեպաշտութեամբ։ Իսկ եթէ զինչ են առաքինութեանցն և զինչ բարեպաշտութեանն, յորս զկնիսորին՝ որոշեսցի, յորժամ յաղագս անձին⁴ և մարմնոյ բացատրեսցուք բան։ Քանզի չե ևս ծանուցելոյ մեզ՝ թէ զինչ երբեք իցէ անձն ըստ էութեանն, ոչ է պատշաճ՝ յաղագս ներգործութեանն նորա այժմ բուռն հարկանել։

Երբայնցլքն զմարդն՝ ի սկզբանէ խոստովանին ոչ մահանաացու, և ոչ անմահ լինել, այլ 'ի միջասահմանն երկաքան, յիւր բնութեանցն. զի եթէ մարմնոյն հետեւեսցի խախցի՝ անկցի և 'ի մարմնական փոխադրութիւնսն. իսկ եթէ զհո-

գւոյն նախապատուեսցէ դարբութիւնքս անմահութեանն արժանաւորեսցի։ Քանզի եթէ 'ի սկզբանէն մահկանացու արարեալ էր զնա Աստուծոյ, ոչ արդեօք 'ի մահ դատապարտեալ էր զնա յետ մեղանչելոյն. քանզի զմահկանացու 'ի մահկանացութիւնն ոչ որ դատապարտէ, իսկ եթէ դարձեալ անմահ, ոչ արդեօք կերակրոյ կարօտ էր կազմեալ զնա. քանզի ոչ որ յանմահիցն՝ կերակրոյ մարմնականի կարօտի. և ոչ էր այսպէս դուրս աւրջացեալ, և զեղեալն անմահ՝ անդէն մահկանացու արարեալ։ Քանզի և ոչ 'ի վերոյ մեղուցելոց հրեշտակացն արարեալ երկի զայս, այլ ըստ յսկզբանէն բնութեանն անմահք մնացին, այլ պատիժ ակն ունել ընդունելով յանցանաց, այլ ոչ մահ։ Արդ լաւագոյն է կոմայսու յեղանակաւ իմանալ զառաջի եւ դեպ զբանս, կամ թէ մահկանացու կազմեցաւ՝ կարող գոյով յառաջագիւտութենէն կատարեալ անմահ լինել, այսինքն՝ զօրութեամբ անմահ լինել, իսկ վասն զի ոչ էր նմա յօգուտ նախ բան զկատարումն՝ զիւր բնութիւնն զիտել, հրաժարեցոյց զնա ճաշակել 'ի փայտէն գիտութեան. քանզի էին իսկ, յաւետ զի ենտակաւին արժմ զօրութիւնք՝ ի տուն կրս մեծամեծք. իսկ յայնժամ 'ի սկզբանն աշխարհագործութեանն ծայրաւ գոյն գոյով՝ հզօրագոյն ունէին զներգործութիւնն։ Էր ուրեմն և ճաշակումն իրիք պտղոյ, ծանուցումն առնել կերակրողին բնութիւնն⁵։ Ոչ կառնէր Աստուած գիտել նմա՝ նախ քան զկատարումն՝ զիւր բնութիւն, զի մի՞ գիտացեալ զինքն կարօտ բազմաց, մարմնականաց փայտոյցի հոգ տարցի, թողեալ զհոգւոյն խնամակալութիւնն. և վասն այսորիկ պատճառի՝ արգել զնա 'ի ճաշակմանէ պտղոյ փայտին գիտութեան։ Իսկ նորաստուգանեալ, և գիտացեալ զինքն՝ 'ի կատարմանէն 'ի բաց անկաւ, և եղև ընդ

¹ Այս է՝ զոր առաջնաբար պատշաճի մարդոյն (τὸν ὡς ἀνθρώπου προήγουμένους).

² Բառք անձն 'ի թարգմանէն 'ի գործ վարի աստ, որպէս և յընթացս մատենին, իբր համանիչ հոգւոյ. որով կամի սանել, իբր անձին կամ հոգւոյ՝ որո՞ւմ ծառայէ մարմին։

³ Բօրինական մեր՝ որպէս մին։

⁴ Բոյնն՝ որպէս զմարդոյ կեալ յօժարեն։

⁵ Այսինքն հոգւոյ, որպէս 'ի վերայ։

⁶ Այսինքն, որում (տակոյն) էր զօրութիւն տալ զիտել առ որ ճաշակէին՝ զբնութիւն անձին։

մարմնականաց պիտոյից . քանզի ան-
դէն ծածկոյթ խնդրեաց . պի առէ Մով-
սէս, եթէ Գիտաց թէ մերկ էր . նախ 'ի
զարմացման արար զնա և յանդիտու-
թեան ինքեան ¹ :

Արդ անկեալ 'ի կատարմանէն՝ նմա-
նապէս անկաւ և յանմահութենէն , զոր
յետոյ առէ շնորհիւ արարողին իւրոյ :
Իսկ յետ անկանելոյն՝ և մնոյ վայելման
թոյլեռնմա . քանզի յառաջագոյն յորոց
'ի յերկրէս միայն՝ հրամայեաց նմա բա-
ւականանալ . քանզի այսօրիկ միայն էին
'ի դրախտին . իսկ անյոյս մնացեալ 'ի կա-
տարմանէն 'ի վայր անկմամբն , այնու-
հետեւ թող ետ նմա զվայելմանցն : Իսկ
վասն զի 'ի մարմնոյ է մարդ , և ամե-
նայն մարմին 'ի չորից տարերց հաստա-
տեցաւ , հարկ է ընդ այսոցիկ խափառ-
անկանել նմա՝ յորոց և տարերքս , փո-
խադրութեամբ և հատմամբ և հոսմամբ ,
որք են միայն մարմնոյ . փոխադրութիւնք
ըստ որակութեան , իսկ հոսումն՝ ըստ
թափման . քանզի թափի կենդանին 'ի
ձեռն յայտից վտառից և անյայտից .
յայազս որոյ յետոյ ասացուք ² :

Արդ հարկ է , կամ թափմանն՝ փո-
խանակ 'ի ներքս բերել հաւասարա ,
կամ լուծանել կենդանւոյն՝ կարօտա-
նօք 'ի ներքս մտեցելոցն : Չորին և խո-
նալին և ոգւոյն թափեցելոյ՝ հարկ է չո-
րին և խոնաւ կերակրոյ կարօտ լինել
կենդանւոյն և ոգւոյն ³ : Եւ է մեզ կե-
րակուր և ըմպելի 'ի ձեռն տարերքս՝
յորոց և հաստատեցաքս : Քանզի իւ-
րաբանչիւր է ինչ՝ որ ընտանեաւ և նմա-
նեաւ կերակրի , և է ինչ՝ որ 'ի հակա-
ռակիցն ուրախանայ ⁴ : Իսկ տարերքս
է ինչ՝ որ 'ի ձեռն միջնորդից ոմանց
մատչիմք . որպէս ջուր՝ երբեմն ըստ ին-

քեան և երբեմն 'ի ձեռն միջնորդից՝
դինւոյ և իւղոյ և ամենայն խոնաւուտ
կոչեցելոցն պտղոց . քանզի ոչ ինչ է այլ
դինի , բայց միայն ջուր՝ յայդւոյ որա-
կացեալ : Նմանապէս և հրոյ հաղորդիմք ,
երբեմն մերձաւորապէս 'ի նմանէ ջե-
ռեալ , և երբեմն 'ի ձեռն միջնորդից՝
յորոց ուտեմքն և ըմպեմք , քանզի յա-
մենեմքն կամ առաւելապէս կամ նուա-
զարար մասն հրոյն սփռի : Ըստ նմին
օրինակի և զօգս մերձաւորապէս ունիմք
'ի տուր և առ շնչոյ և հեղեալ ջուրջ
զմեք , և յուտելն և յըմպելն՝ 'ի մեզ
քարչելով 'ի ձեռն միջնորդութեանց այ-
լոցն ամենեցունց՝ որոց մատչիմք : Իսկ
զերկիր մերձաւորապէս մեք ոչ ունիմք ,
այլ 'ի ձեռն այլոց . քանզի յերկրի լինի
ցորեան , և մեք զցորեանն ուտեմք . իսկ
ողլաւնիք և կաքաւք և այլք 'ի հաւուց՝
հող ճարակին ⁵ . բայց մարդիկ 'ի ձեռն
միջնորդութեան սերմանեաց և բանջա-
րոց և մարմնոց , իսկ վասն զի ոչ միայն
վասն զեղեցկութեան , այլ և վասն բա-
րւոք զգեստուց՝ ⁶ որ ըստ չօշափելեաց ,
որով մանաւանդ առաւելու քան զայլ
կենդանիս մարդն , ոչ էարկ չուրջ զմեք
մօրթ թանձրամօրթիւք , և ոչ մազ կուռ
և խիտ , որպէս այծից և ոչ խաւաց և
նապաստակաց , և ոչ թեփ՝ որպէս օձից և
ձկանց , և ոչ խեցի՝ որպէս կրայից և դաղ-
տակրաց ⁷ , ոչ թե՛ որպէս հաւուց : Հար-
կաւորապէս զգետուտ կարօտ եղեալք 'ի
լրումն մեզ , զոր ինչ այլոց կենդանեայն
բնութիւնն պարգեւեաց : Վասն այսորիկ
և կերակրոց և հանգերծից պէտս ունիմք ,
այլ և բնակութեանն ոչ վայրապար՝
վասն և 'ի գաղանաց խղիւս տալոյ , իսկ
վասն ոչ բարեխառնութեան որակու-
թեանցն , և յաճախ լուծման մարմնոյ՝

¹) Այսինքն՝ յանդիտութեան անձին :

²) Car l'animal perd constamment sa substance par les pores visibles et invisibles. Trad. de J. B. Thibault.

³) Այսինքն է . թափեցելոցն արտաքս 'ի մարմնոյն մասանց զպով կամ հաստատուն ինչ , կամ լուծանել և կամ ոգիդէն , կարօտի կենդանին նորոգիլ և հաստատուն և լուծական և ոգիդէն անդուլք :

⁴) Այսպէս յօրինական մեր . ըստ յունին՝ հա-

կառական դարմանի (τῶδ' ἐναυτίῳ διαπεύεται).

⁵) Ամենայն հաւք թռչունք առհասարակ ուտեն երբեմն և զհող , ոչ եթէ առ 'ի սնունդ , այլ առ 'ի մանրել նորաք 'ի ձեռն չիման 'ի ստամոքի զանդազոյն մասունս աննդական կերակրոյն :

⁶) Յոյնն ունի . Այլ և վասն ընտիր զգայութեան , որ ըստ չօշափելեաց :

⁷) Յօրինակս ինչ չիք գաղտակրաց , որպէս և ոչ 'ի յայն :

բժշկաց և բժշկութեան պէտք կարգեցան: Իսկ փոխադրութեան ըստ որակութեան եղելոյ՝ հարկ է, վասն հակառակ որակութեան՝ իշխաւորն ամեն զկարգ մարմնոյն¹: Քանզի ոչ որպէս ոմանք վարկանին՝ զլեռեալն մարմին ցրտացուցանել կոյ առաջի բժշկաց, այլ ՚ի բարեխառնութիւն փոփոխել: Քանզի թէ ցրտասցի՝ ՚ի հակառակն փոխադրեսցի հիւանդութիւն կամ տրամադրութիւն: Արդ պիտոյ է մարդոյ կերակուր և բմպելի վասն թափման², իսկ հանգերձ՝ վասն և ոչ մի ինչ ունելով բնաւորապէս հզօր³ վերարկու, իսկ տուն վասն ոչ բարեխառնութեան օդոյ և գազանաց: Իսկ բժշկութիւն՝ վասն փոխադրութեանց որակութեանց, և վասն զգայութեանն՝ որ է ՚ի մարմին. քանզի թէ ոչ էր ՚ի մեզ զգայութիւն, և ոչ խօթանայաք երբեք, և ոչ բժշկութեան կարօտանայաք: Խօթացեալք և ապականեալք անգիտութեամբ չարին՝ ոչ զգալով աստին⁴: Իսկ վասն արուեստիցն և մակացութեանց և յայսցանէ պիտոյից՝ միմեանց պէտս ունիմք. և վասն կարօտ դոյնն միմեանց, ՚ի միասին ժողովեալք բազումք՝ հաղորդիմք միմեանց ըստ կենցաղոյս պիտոյից ՚ի տուր և առս. զորս ժողովումն և կեանակցութիւն՝ քաղաք անուանեցին, զի ՚ի մօտուստ և մի ՚ի հեռուստանէ զառ ՚ի միմեանց օգուտն չահեսցուք: Քանզի և բնութեամբ ժողովասէր է մարդ և քաղաքական է կենդանի⁵ եղեալ. քանզի մինն ոչ է բուական ինքեամբ առ ամենայն. արդ յայտ է թէ քաղաքք վաւրն տուրեաւոյց և ուսմանց շինեցան:

Բայց երկուքս այսորիկ առաւելա-

պէս ընծայեցան մարդոյ. քանզի օտ միայն հանդիպի թողութեան մեղաց զըզլացեալ, և սորա միայնոյ մարմին մահկանացու գոլով՝ անմահանայ. և մարմնականին՝ վասն հոգւոյն, իսկ հոգեկանին՝ վասն մարմնոյն հանդիպեցաւ: Քանզի միայն մարդ ՚ի բանակաւ նսցն՝ առաւել ունի թողութեան արժանաւորիլ ՚ի զղմանալն: Քանզի ոչ զեք և ոչ հրեշտակք զըզլացեալք թողութեան արժանաւորին, և այսուիկ մանաւանդ արգարև ողորմած ցուցանել և ապի Աստուած: Քանզի հրեշտակաց ոչինչ ունելով հարկեցուցիչ քարշելով ՚ի մեղս, այլ ապառ զտղով բնութեամբ ՚ի մարմնեականաց աստիցն ՚ի պիտոյից և ՚ի հեշտութեանց, յիրաւի և ոչ մի թողութիւն տուեալ լինի ՚ի զղմանալն. բայց մարդ ոչ միայն բանական է՝ այլ և կենդանի. իսկ պէտք կենդանւոյ և ախտք՝ յորովա կի քարշելով զբանականին զխորհուրդըս. արդ յորժամ զգատացեալ ՚ի բաց փախչիցի յայսցանէ, և տարեալ լինի յառաքինութիւնս, ողորմութեան արդարացւոյ հանդիպի և թողութեան մեղաց: Եւ որպէս իւր է բնութեան նորա ծիծաղականն⁶, վասն զի սորա միայնոյ է ամենեկին և միշտ, այսպէս յորոշ ըստ շնորհի՝ իւր է յամենայն բանականանացն ստացուածոց՝⁷ ՚ի ձեռն զղմանն ՚ի բաց մերկանալ զյառաջադոյնսն զյառացանս. քանզի միայնոյ մարդոյ պարզիւր ոյս, և ամենեկին և միշտ, ՚ի ժամանակի աշխարհիս կենաց. իսկ յետ մահուանն ոչ ես: Այսպէս և ոմանք զհրեշտակա ասեն, ոչ ես հանդիպել յետ անկմանն՝ ՚ի զղմանէ՝ թողութեան,

¹) Այսինքն է, զի ՚ի զգալ անդ մերում փոփոխութիւն ինչ փնտասցեր ՚ի մարմնի մերում, հարկ լինի մեզ զիմե ՚ի հակառակն նորին, առ ՚ի սրտաւ չափու ունել զանձինս. որպէս ՚ի զգալ ցրտոյ՝ առ ինքութիւն, նօթութեան՝ առ ՚ի յագուրդ, և որ ըստ նոցանէն:

²) Բայն, δια τὰς κενώσεις καὶ διαφθοράσεις, վասն կորուսմանցն և վասն աւերորդացն արտաքսուման:

³) Այլ օրինակ՝ հոծ վերարկու:
⁴) Թմն. Թէ ոչ ունէաք զգայութիւն, թէ և խօթանայաք չարին, այս է՝ ցաւովն, և ապականեալք, ոչ զգայաք:

⁵) Ամենայն օրինակք մեր՝ քաղաք է կենդանի. ուղղեցաք ըստ յունին:

⁶) Թմն. Մարմինն յառէն ՚ի մեղելոյց, զի հոգին անմահ է. իսկ հոգին թողութեան արժանաւորի, զի մարմինն տկար է:

⁷) Այսինքն իմաստաւորք զմարդ կոչին կենդանի ծիծաղիկոս (ζῶον γελαστικόν), զի սորա միայնոյ է ծիծաղելոյ կարողութիւն յամենայն կենդանիս:

⁸) Այսինքն, սեփական ինչ է մարդոյն՝ յառնայն արարածս բանականս, ըստ շնորհացն Աստուծոյ քառութիւն գտանել յանցանաց:

քանզի մահ նոցա՝ անկումնն է. իսկ նախ քան պանկանելը՝ ըստ նմանութեան կենաց մարդկան՝ և նոցա արժանաւորիլ թողութեան. զոր թէ ոչ արարեալ առանց թողութեան և յաւիտենակա նին ունին այնուհետև զպատուհասի վայելուչ դատաստանն: Եւ յայտ է յայս ցանէ՝ որպէս զի որք զապաշխարութիւն ոչ ընդունին, զգերաբարձեալս պարգև և որ իւրն է մարդոյն՝ տարագիր առնեն: Եւ է իւր նորա և գերաբարձեալ և միայնոյ յայլոց կենդանեաց՝ մարմնոյն յետ մահուանն յառնելն և յանմահութիւն դառնալն. և հանգիպի այս միկ վասն հոգւոյն անմահութեան, որպէս և այնմիկ՝ վասն մարմնոյն տկարութեան և բազմախառութեան: Իւր են նորա և որքան ինչ արուեստից և մակացութեանց ուսմունք և ներգործութիւնք: Վասն որոյ և զմարդն սահմանեն, կենդանի բանաւոր, մահականացու, մտաց և մակացութեանց ընդունակ: Կենդանի, վասն զի և մարդն էութեամբ է շնչաւոր և զգայական. քանզի այս է սահման կենդանւոյն: Իսկ բանաւոր, զի ուրոշեցի յանբանիցն. և մահականացու՝ զի զատցի յանմահիցն կենդանեացն. իսկ մտաց և մակացութեանց ընդունակ՝ վասն զի՝ ձեռն ուսմանց առկիսին՝ ի մեզ արուեստք և մակացութիւնք. ունին և զօրութիւն ընդունական և մտաց և արուեստից, իսկ գնեցործութիւնս ստացեալ յուսմանց: Եւ ասեն զայս առգնիլ ի սահմանն յետոյ, ամբողջ գոյով և առանց այսորիկ՝ սահմանին: Այլ վասն զի հարսունս և այլ ուսման ազգս դիւաց ասեն ուսմէք բազմաժամանակայս, սակայն ոչ անմահս. և զի ի սոցանէ ի բաց որոշեացն զմարդն՝ յաւելին զմտաց և զմակացութեանց ընդունակն. քանզի ոչ որ ի սոցանէ ուսանի ինչ, այլ բնութեամբ գիտէ զոր ինչ գիտէն, ասեն:

Իսկ Երրայեցւոյն օրէնքն՝ զամենայն զայսսօիկ վասն մարդոյն եղեալ և մերձաւորապէս վասն նորա, որպէս զբեռ.

նակիրսն և զեզինս առ ի յերկրագործութիւն. իսկ խոտ՝ վասն նոցա. քանզի յեղեցոյն է ինչ՝ որ վասն ինքեանց եղեն, և է ինչ՝ որ վասն այլոց. վասն ինքեանց՝ բանականք ամենայն, իսկ վասն այլոց՝ անբանք և անշունչք: Իսկ եթէ այսորիկ վասն այլոց եղեն, վասն որոյ եղենն՝ տեսցուք: Արդեօք վասն հրեշտակաց. այլ ոչ որ ի բարւոք իմա. ցողացն վասն հրեշտակաց ասիցէ զայս լինել. քանզի վասն այլոց եղեալքն, ի հաստուսն նոցա և վասն տեսողութեան և հանգստի եղեն. քանզի փոխանորդութեան ազգի սակս կամ կերակրոյ, կամ բշկութեան, կամ օթեանի և հանգըստեան. իսկ հրեշտակք ոչ ինչ են յայս ցանէ կարօտք. քանզի ոչ փոխանորդութիւն ազգի ունին, և ոչ կերակրոյ մարմնականի պէտտ, ոչ հովանւոյ, և ոչ այլ ինչ իրիք: Իսկ եթէ ոչ հրեշտակք, յայտ է թէ և ոչ այլ ինչ բնութիւն վերագոյն քան զհրեշտակս. քանզի որչափ գերագոյնն կայ, այսքան յաւէտ և անկարօտ է այնց ամենայնի: Արդ խնդրելի է բնութիւն բանական և կարօտ յառաջագոյն ասացեցոյցա՞ թէ՞ ոչ այլ այսպիսի երեսեցի՞ ի բաց թողեալ զմարդն. ապա ուրեմն ժողովի՞ վասն նորա եղեալ անբանքն և անշունչք: Արդ, վասն զի սորա աղաքաւ՝ որպէս ասալաւ՝ եղեն, վասն այսորիկ և իշխան սոցա կարգեցաւ. և է գործ իշխանի՝ առչափ պիտոյից հպիլ յորս ընդ իշխանութեամբն, և մի առ հեշտութիւն վաւաշտաբար թշնամանիլ, և մի ծանրաբար և տարժանապէս բերիլ առ որս ընդ իշխանութեամբն: Արդ մեղանէն՝ որք անանտիքն ոչ բարւոք վարին. քանզի ոչ գործեն զգործ իշխանի, և ոչ արգարոյ՞ ըստ գրեցելուսն՝ Այս ողորմած ողորմի ի վերայ գրաստու իւրոյ:

Այլ թերևս ասիցէ որ՝ թէ ոչինչ վասն այլոյ ուրուք, այլ իւրաքանչիւր որ վասն իւր եղև: Ապա ուրեմն որոշեալ նախ զշնչաւորն յանշունչիցն, տեսցուք թէ կարիցեն անշունչքն վասն ինքեանց

¹⁾ Այս է, ապա ուրեմն զհետ զայ, ճշմարտի, ստուգի:

²⁾ Բօրնական՝ և ոչ արդարապէս՝ ըստ գրեցելուսն, և այլն. ուղեցաք ըստ յունին:

լինել. քանզի թէ այնքով վասն ինքեանց եղեն, զիւրդ կամ ուստի կերակրեսցին կենդանիք: Քանզի տեսանեմք զբնութիւն՝ բաշխելով կենդանեաց կերակուրս ի յերկրէ, պըտուղս և բոյսս, բայց միայն ի յետնոցն ի մարմնակերպոցն¹: Եւ այսորիկ նոյն մարմնակերպս կերակրեն ի կենդանեաց՝ որք ի յերկրէ ճարակին, որպէս զայլք և առիւծք՝ զառինս և զայլ զկենդանիս: Իսկ արծուիք՝ կաքաս և նապաստակս² և այլս այսպիսիս, որք զպըտուղս երկրին ճարակին: Քանզի և ձըկանց բնութիւն՝ որք զմիմեանս ուտեն, այլ մնաց³ ի նոցանէն ճարակել և զմամուռ, և այլ ինչ որ ի ջուրս բոյսք: Փանզի թէ էր ամենայն ձկանց ազգք մարմնակեր, և ոչ ինչ էր արտադրոյ յայսմանէ, ոչ արդեօք ինչէր բաւական և ոչ փոքր ինչ⁴, այլ ապականէր ոմոնք ի միմեանց, և այլք ի կերակրոց նուազութենէ: Իսկ վասն զի մի այս եղիցի, ոմանք ի ձկանցն կազմեցան ճեռի ի մարմնակերութենէ. որպիսի ինչ ասիցէ զք՝ զծովու բոյս ճարակել, զի ի սուցանէ և այլք ամբողջ պահեսցին: Քանզի լինի սոցա կերակուր՝ մամուռն⁵, իսկ նոքա՝ այլոց, և նոքա դարձեալ այլոց, որպէս վասն վերջնոցն կերակրոցն՝ աննիազաբար յերկրայնոցն՝ որ ի ծովուն բաշխեալ, և այլոց զոյսացութիւնն ամբողջ պահեսցի: Արդ ուսոյց բանս ըզբուսոցն ինքնութիւնն ոչինչ վասն ինքեանց, այլ ի կերակուր և ի հաստատմն մարդկան և այլոց կենդանեաց եղեալ: Իսկ եթէ այսորիկ վասն մարդոյ և կենդանւոյ, յայտ է թէ այսոցիկ անման

և ինքնութեան պատճառ՝ վասն այսորիկ եղև: Ապա ուրեմն և աստեղայն շարժութիւնք, և երկին և ժամք և անձրևք, և ամենեքին այսորիկ վասն այսորիկ եղեն, զի կերակրոյն՝ որպէս չընազայիւ միշտ բաշխեցելոց, անպակաս և մատուցողացն զպտուղս՝ մնացէ բնութիւն⁶. որպէս զի գտանիլ այսորիկ վասն պտղոց, իսկ պտուղ վասն կենդանեաց և վասն մարդոյ:

Է այսուհետև տեսանել՝ եթէ արդեօք և անբանիցն բնութիւն վասն ինքեան եղև, թէ վասն մարդոյն: Այլ թերևս անտեղի է՝ զանբաժան յիմանալոյ և ըստ բնաւորական յարձակման միայն կենդանիս և յերկիր կորացեալս, և զժառայութիւն ի ձեռն ձեռն ցուցեալս⁷, ասել վասն ինքեանց զոլ յառաջ: Բայց բողբոմ ինչ հնար գորով ասել առ այս, և գրեթէ առանձինն շարագրութիւնս առնել. ոչ տանելով⁸ առ ընթեր պատճառիս զերկայնութիւն բանիցն, համառօտադոյնս ասացից, սակայն և ամբողջս: Արդ՝ եթէ որպէս ի պատկերի՝ զորս յանբանիցն են ի մարդն հայեցեալ տեսանեմք՝ ի նմանէն գիտեմք առնել զցուցումն էութեանն, զոր խնդրեմքն: Տեսանեմք այժմ ի մերումս անձին զանբանութիւն և զսորայս մասունս. և ասեմք զբնաւորական յանկութիւն և սրտմտութիւն՝ առ ի սպասաւորութիւն տուեալ բանականին. զի նա իշխան է, և նոքա ընդ իշխանութեամբ, և նա հրամայող, իսկ նոքա հրամանակատարք և սպասաւորեալք պիտոյիլքն, որով բանն ընեւէռէ, յորժամ ամբողջ ունի մարդն զբարբնութեանն⁹: Արդ՝ եթէ

¹ Այս է՝ ըստ յունին՝ բայց միայն ի սակաւոց մարմնակերպք. որք առ Գաղղիացիս կոչին carnassiers կամ carnivores.

² Յոյնն. Որպէս զայլք և առիւծք՝ զգառինս, զայժմ, զխոզս և զեղջերուս. իսկ արծուիք՝ կաքաս և հուսիայս և նապաստակս կերակրին:

³ Յօրինակս ինչ ունեց, իսկ յոյնն ունի. Քանզի և ի ձկանց բնութենէ՝ որք զմիմեանս ուտեն, ոչ ամենեցուն է մարմնակերպ լինել. այլ զկայաւորս յայն՝ որ ճարակին զմամուռ. և այլն:

⁴ Այս է՝ զկնի սուղ ժամանակի շննայր և ոչ մի, միմեանց և կամ սովոյ եղեալ ճարակ:

⁵ Լիմն. Մամուռ՝ կանաչ աղափին որ ի քարն

լինի. վերջի ձուկն՝ որ ոչ է մարմնակեր, զերկրաս յին բոյս՝ որ ի ծով լինի՝ ուտէ:

⁶ Այսինքն է՝ զի յապահովի կացութեանն՝ դարձադարձ չընանոցն զարդիւնս բերող երկրի, առ ի կերակրել անպակաս ամենայն ազգի կենդանեաց:

⁷ Այսինքն է՝ զանբանսն, որ ձեռնիլ իւրեանց յայտենն զիւրեանց նպատակ ծառայելոյ մարդկան: Բնաւորական յարձակումն իմա գտեղասփոխութիւն:

⁸ Յօրինակս երկուս՝ տակնիւնով:

⁹ Այս է՝ ցորդով յիւրում ի բնական պայմանին և յորէնս կացցէ մնացէ մարդն:

ի մեզ է անբանն յանբանից, ե որ ՚ի մեզ բանականն է իշխան ՚, զիսորդ ոչ է վա-
յելուչ, և արտաքնոց անբանից նմա
տիրել, և առ ՚ի պէտս նորա սուեալս.
քանզի ՚ի սպասաւորել բնութեամբ է
կարգեալ անբանն բանականին. որպէս
որովք և ՚ի մեզս ցուցաւ: Եւ յայտնի է
այսու և բազմացն կենդանեաց կազ-
մութիւն առ ՚ի սպասաւորութեան մար-
դոյն եղեալ, եղինք և ամենայն բռնա,
կիրք առ ՚ի յերկրագործութիւն և ՚ի
բռնկրութիւն. և բազումք ՚ի թռչնոց
և ՚ի ջրայնոց և ՚ի ցամաքայնոց, առ ՚ի վա-
յելումն. իսկ զխօսողականն իմն ՚ի զը-
ւարճութիւն: իսկ եթէ ոչ ամենայն այս,
պիսեօք պիտոյիլք սպասաւորեն, այլ են
և որք ապականեն զմարդն, գիտելի է թէ
յառաջագոյն ընդ որովք վասն սպա-
սաւորութեան եղեն. և այլքն ամենայն
կարեւորք կազմեցան, զի մի ինչ եղիցի
պակաս յարարածս ՚ի կարեւորացն լի-
նել: Եւ ոչ այսորիկ ամենայն ամենին
հեռի են ՚ի մարդոյս օգտութենէ. այլ
և ՚ի փաստակարան՝ առ ՚ի յօգուտ նմա
պտղաբերէ բան. քանզի վարի նորօք
առ ՚ի բժշկութիւն, առ ՚ի նոցայոցն
փաստակարութենէ՝ այլոցն հիւանդու-
թեանց յառողջութիւն. այսպիսիք իմն
են թիրակէքն կոյեցեալք՝ զոր բանն
իմացաւ և կազմեաց, զի և նոցա՝ իշխա-
նականն իշխեսցէ նորումք. և որպէս
՚ի թշնամեաց ըմբռնեցելոց օգտեսցի, և
նոցա զինոյն զնոսա սպանցէ: Եւ ունի
մարդ բիւր զօրութիւնս հսկառակ սո-
ցա տուեալ առ ՚ի յարարազործու-
թենէ՝ արգելու և վրէժս առնուլ,
և յուղղութիւն ածել զգաւաճանու-
թիւնս նոցա: Քանզի այլ ինչ այլոց պի-
տոյ իցէ պատշաճ, իսկ հասարակաց ա-
մենայն առ ՚ի յօգուտ մարդոյն կատա-
րիլ բնաւորեցաւ, և որք ոչ այլ ինչ պի-
տոյից են պիտանիք:

Եւ այսորիկ առ ժամուս կարգ կենցա-
ղոյս մերոյ ասացի. վասն զի ՚ի սկզբ-
բանն ոչինչ յայլոյն կենդանեաց իշխէր
փաստել զմարդն, այլ էին ամենայն նորա

ծառայք և հնազանդեալք և հաւա-
նեալք նմա, ցորդուն իշխան էր իւրոցն
ախտից և անբանութեանն՝ որ ՚ի նմա.
Իսկ յորժամ ոչն յաղթեաց իւրոցն ախ-
տից, այլ յաղթեցաւ, իրաւամբք և
յարտաբուստ գազանացն՝ ՚ի ներքս ե-
մուտ ընդ մեզացն՝ և որ առ ՚ի նոցանէն
փաստ: Եւ զի է այս ճշմարիտ՝ յայտ է՝
յորոց առաքելութեամբն անցին ընդ
կենցաղս. քանզի առանց մարտի զօրա-
գոյնք երեսեցան. քան զգազանացն փա-
ստկարութիւնն. որպէս քան զառիւ-
ծունսն Դանիէլ, և Պաւլոս քան զիսին
խածանեցն:

Արդ ո՞վ որ արժանաւորապէս պան-
չացի ընդ բարետոհմութիւն այս կեն-
դանւոյս, շողկապողիս ընդ ինքեան
զմահկանացուս ընդ անմահիցն, զբա-
նականքս ընդ անբանիցն խառնողի, բե-
րողիս յիւրում բնութեան զամենայն
արարածոցս պատկեր, վասն որոյ և փո-
քրր աշխարհ ասի, այսքան արժանաւո-
րեցելոյ առ ՚ի յԱստուծոյ նախախնա-
մութեանն. վասն որոյ և ամենայն՝ և այժ-
մութս և հանդերձեալքն. վասն որոյ և
Աստուած մարդ եղև, յանապականու-
թիւն և յանմահութիւն փոփոխեալ
յերկնից թագաւորութիւնն, բոստ պատ-
կերի և բոստ նմանութեան Աստուծոյ
եղեալք, Քրիստոսի կենակից և Աստու-
ծոյ ժառանգ, ամենայն իշխանութեանց
և պետութեանց գահերէցք նստեալք:
Եւ ո՞վ որ արդեօք ասել կարիցէ զայսր
կենդանւոյ զառաւելութիւն. ընդ լայ-
նութիւն ծովու անցանու, ընդ երկինս
գնայ՝ տեսութեամբ, զաստեղացն շար-
ժութիւնն և զմեկուսութիւնս և զչափս
նկատէ, զպտուղս երկրի և ծովու վայ-
ելէ, զգազանս և զկէտս արհամարհէ,
զամենայն մակացութիւն և զարուեստս
կանգնէ, հեռաստանէ ՚ի ձեռն գրոյ՝
ընդ որս կամի՝ խօսի, ոչինչ ՚ի մարմնոյս
խափանեալ. մարդարեանայ զհանգեր-
ձեալսն, ամենայնի իշխէ, զամենեսեան
վայելէ. ընդ հրեշտակաց և ընդ Աս-
տուծոյ խօսի. արարածոցս հրաման

մեզ է, իշխէ անբանականացն որ ՚ի մեզ մա-
սանց, և այլն:

10) Յոյն ունի. «εἰ δὲ τῶν ἐν ἡμῖν ἀλόγων τὸ ἐν
ἡμῖν ἀρχεῖ λαογίαν, այս է. իսկ եթէ բանն որ ՚ի

տայ, դիւաց սաստէ. զէիցս բնութիւն
քննէ, զատուծոյսն հարցափորձէ,
տուն և տաճար Աստուծոյ լինել. և զայս
ամենայն՝ առաքինութեամբ օգտի և
բարեպաշտութեամբ: Այլ զի մի թուե-
ցուք ոմանց անգեղեցկափորձապէսներ,
բողել զմարդն, և ոչ՝ միայն զբնութիւն
նորա արտադրել, որպէս առաջի եղաք,
աստանօր հանգուցոյք զբանս. մանա-
ւանդ զի թէ և զբնութեանն զառաւե-
լութիւն ասեմք՝ զնոյն բնութիւն պատ-
մեմք:

Արդ, տեսանելով զնոյն բնութիւն՝
թէ որքան բարետոհմութեան հաղոր-
դեալք, և զի տունիք եմք երկնայինք, մի
ամօթ արասցոյք զբնութիւնս, և մի այս-
քան պարզեալք երեսացոյք անարժանք,

և մի յայսքան իշխանութենէ և 'ի փա-
ռաց և յերանութենէ զրկեացոյք զմեզ,
ընդ փոքր ժամանակի և դոյզն հեշ-
տութեան՝ փոխանակելով զամենայն
յաւիտենից վայելումն: Այլ 'ի ձեռն
բարեաց դորժոց՝ 'ի բաց հեռանալ 'ի
չարաց, և ուղիղ գնացիւք՝ որոց գոր-
ծակից եղիցի Աստուած, և աղօթիւք
զբարեպաշտութիւնս ամբողջ պահեա-
ցոյք: Իսկ յազագս այսօրիկ բաւական
է այսքան: Բայց վասն զի զմարդն 'ի հո-
գւոյ և 'ի մարմնոյ ենթակայեալ յարա-
կայ բանն, բեր 'ի բաց որոշեալ՝ նախ յա-
զագս անձին ձեռնարկեացոյք ասել, ըզ-
յոյժ նրբագոյնսն և զգժուարինսն և ըզ-
բազմաց անգիտելիս 'ի խնդրելեացն 'ի
բաց լծողեալ:

Շարունակելի

ՏՐԱԺԵՇՏ Ի ՍԻՐԵԼԻՈՅ

Ահա ոստտիկ վայրկեանն, ողջ լեր վարդ իմ ցանկալի,
Զխարդ մնացից կենդանի և լինիմ բերկրալի.
Կեցից հանապաղ 'ի ցաւ, և ոչ գտից այլ բարիս,
Եւ դու արդեօք ո՞ գիտէ՞ թէ յիշելոց ես գիս:
Գոնեա թող զի փոխանակ ահի կորեատեան խոյ
Գայ խորհումն հետեօղ ընդառաջել զերթըս քոյ.
Զզնացըս քո յարածամ՝ առ աչքս ունիս,
Եւ դու արդեօք ո՞ գիտէ՞ թէ յիշելոց ես գիս:
Առ հեռակայ եղբրաց՝ հարկեալ 'ի տըրտմութենէ,
Զնայից 'ի քարոյ՝ խնդրել զիմ սիրեցեալն՝ մեր է,
Զմիոյ կողմանէ առ միւս գնացից 'ի գոշունս վարդիս,
Եւ դու արդեօք ո՞ գիտէ՞ թէ յիշելոց ես գիս:
Դառնալոց եմ ըստէպ փութով առ այն բըլուրն զըւարճալի,
Առ երջանիկ ապրէի՝ յորժամ ընդ քեզ էի.
Յիս լինելոց են տանջանք, հազար յիշելիք քո յիս,
Եւ դու արդեօք ո՞ գիտէ՞ թէ յիշելոց ես գիս:
Ահա ստացից աղբիւրն՝ ուր վարեցաւ զայրացմամբ,
Յետ 'ի նըլան հաշտութեան՝ զձեռքս ետ փազցրութեամբ.
Առ ապրէաք յուսալի, անդ վիճակէաք զչարիս.
Եւ դու արդեօք ո՞ գիտէ՞ թէ յիշելոց ես գիս:
Զորքանս տեսցես հասեալ 'ի նորագ բնակարանս քոյ,
Զորքանս գալ 'ի նուիրումն հաւատի սիրոյ,
Եւ թէ 'ի մէջ այնքանեաց փոփոկ յարկեաց աշխարհիս՝
Ո՞րքեօք կարէ գիտել թէ յիշելոց ես գիս:
Յիշեալ և դրաղցրոր նետն այն, զոր և թողուս 'ի լանջն իմ,
Յիշեալ զի սիրեաց անձն իմ, թարց յուսալ առ պարզէն իմ,
Խորհեալ կեանքն իմ առ այս սըգացողական ողջանելիս,
Վուցէ արդեօք ո՞ գիտէ՞ թէ յիշելոց ես գիս:

ՆԱՐ ՔԱՐ